

Հ Ա Ս Ց Է


Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE

Քանոնական և քաղաքական
ԵՊԻՏԿՈՍՏՈՍԵԱՆ



ՊԱՅՄԱՆՔ

Կ. Դ. ԿՈՍՏԱՆՍ

Տարեկան գրե- ողջ

30

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան փրանգ

10

Ռամսեսի 3-րդ թանգարանի փոխարեն
վերականգնված գրե- ողջ լրացն .

Ձի հրատարակումը ձեռնարկները
և չեղն արտի :

ԱՐՁԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ր Ե Ր Թ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Քանոնական և քաղաքական
ժամանակակից կյանքի մասին
և նրա համապատասխանության

ԱՐՏԱՍԱՀԱՆ ԵՐԿՈՒՇԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷՆ

ZUSC 20 ՓԱՒԱ ՈՂՋ

ՉԵԿՈՑ

Լուսանկարները նոր գլխիկներ
ընդ պատրաստության համար մին
չե նոր չըլան՝ 1910 Յունուար մեկ
զանց պիտի ըլլայ անոնց հրատա-
րակությանը :

Յառաջիկայ Տասներորդ տարե-
յրջանին Ա . Թիւն սկսեալ պիտի
տանք երկրորդի վեհապետ Ն . Բ .
Խաչիկին , Վ . Վ . Պողոս և Բար-
թիւ Աբրահամ բաշտներու , ինչպէս
նաև ազգային ուրիշ կարևոր դէմ-
քերու լուսանկարներն :

Յոյս ունինք նոյն իսկ Արշա-
ղոյսի ծաւալն ալ ընդարձակելու :
ԽՄԲ .

ՄԵԾ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՈՒՇԱՆԵՐԸ

Մարդից գործունէութեան աս-
պարէզին ամենէն դժուարինը , բարդ
պատասխանատուութիւններով ա ի
նէն շատ ծանրաբեռնուածը՝ Հաս-
նային կեանքն է :

Ասիկայ պէտք է ընդունին հան-
րութեան հոգը ստանձնողները :
Դասակարգի խորութիւն չկայ . . .

Մարդ անգամ մը հանրութեան
համար ապրելու ասպարէզին մէջ
ոտք դնելէ յետոյ , այլ ևս ինք իր
անձին տէրը ըլլալէ կը դադրի :
Հանրութեան սեփականութիւնն է
ինք :

Վայ ա՛յն մարդուն՝ որ հան-
րային կեանքը ապրելու համար
պահանջուածին չափ բարոյական ,
նոյնչափ ուղղամտութիւն և ան-
կողմնակալութիւն , ու ճշմարտասի-
րութեան հետ միացած անկեղծու-
թիւն չունի : Այս պարագային է որ
շատ աւելի կը բարդուին կնճիւնե-
րը՝ ու տաղտուկը անտանելիորէն
կը սաստկանայ . . .

Հանրային կեանքը ապրելու
համար վերագրեալ քանի մը գովե-
լի արժանիքները իրարու ձեռք
ձեռք տուած գործելու են , ծա-
ռայել ուղղուած համայնքին իրա-
կան օգուտ արտադրելու համար :

Հանրային կեանքի և հաստա-
տութեանց մէջ մեծի պղտիկ տար-
բերութիւն չկայ : Պատասխանատու-
ութիւնները հաւասար են միոյն և
միւսին մէջ . և այդ համեմատու-
թեամբ պէտք է որ կատարուին
ձեռք առնուած զգուշութիւններն ,
հանրային գործը պահանջուած հան-
գամանքներուն համապատասխան
վիճակի մէջ յառաջ մղելու համար :

Ու եթէ մէկը՝ հանրային կեանք
ի մէջ չի մեղանշէր հանդէպ վե-
րը յիշուած անհրաժեշտ հանգա-
մանքներուն , այդ հանրային գոր-
ծիչը ամենէն շատ աւելի յարգա-
նաց արժանի է , ու պէտք է որ
անոր յարգանքի բաժինը անձեռն
միտել մնայ , ինչ չըլանակի ալ որ
պատկանի այն՝ և ուր որ ալ դըր-
նուի :

Ըսուեցաւ որ հանրային հաս-
տատութիւններու մէջ պատաս-
խանատուութեան տեսակէտով հա-
ւասարութիւն կը տիրէ . այսինքն
մեծի պղտիկ տարբերութիւն չկայ :
Անտարակոյս սխալ չի մեկնուի այս
բացատրութիւնը :

Յարգանքի և կենցաղագիտու-
թեան դէմ մեղանշելու թելադրանք
մը ընել չէ՛ նպատակս . բայց այդ
յարգանքն ալ փոխադարձ ըլլալու
է , նիւթականի և գիրքի տեսակէտով
գասակարգային տարբերութիւն գո-
յութիւն ունեցած պահուն իսկ :

Դասակարգերու տարբերու-
թեան բարձունքէն ուղղուած ար-
համարհանքը բարդութիւններ կըր-
նայ ստեղծել ամեն առեւ , անըն-
դունելի և անախորժ հետեանքներ
ստեղծ իր ետեւէն բարձ տալով :

Հանրային կեանք ապրող պէտք
չէ որ խրոչի օրինաւոր քննադատու-
թիւններէ , երբ անոնք ո՛չ թշնա-
կան և ազնիւ գիտութիւններով տեղի
կուենան , և մանաւանդ հանրա-
յին այդ հաստատութիւնները բա-
րոյական և այլ ամեն տեսակէտնե-
րով՝ քննադատութեանց տակալու
վիճակին մէջ կը գտնուին :

Նիւթականը՝ թէ և ամենէն գոր-
ծոն դերը կրնայ կատարել կեանքի
բոլոր երեւոյթներուն մէջ , սակայն
հանրային գործերու համար այդ
մեծ ուժ ներկայացնող մետաղը իր
արժէքը և զօրութիւնը բոլորովին
կը կորսնցնէ և խոնարհաբար գլուխ
կը ձգէ բարոյականի բարձրութեան
տալէ , զրեթէ առանց բացառու-
թեան . . . Բարոյականով օժտուած
հանրային գործիչ մը՝ ամենէն ա-
նուիկ պատնէչին ետեւ ապաստա-
նած կրնայ նկատել ինքզինքը :

Խաբուսիկ երեւոյթներէն քա-
ջալերուելու չէ , որովհետեւ ատոնք
շատ վաղանցուկ հետքեր մը միայն
կը թողուն և եղծանելի են . . .

Այս նախաբանէն յետոյ միայն պի-
տի կրնամ զբաղել Վեժ Հաստա-
տութիւն խորագրովս , որուն մեծ
նպատակն է՝ կազմուելն ի վեր ,
արդարեւ մինչև որոշ թուական մը ,
անոր հանդէպ մասնաւոր գուրդու-

րանքով մը բարախած էր սիրտու . . .

Մարդ երբ կ'ստիպուի իր պաշ-
տած կուսքը մէկ օրէն միւսը վըր-
րել , խորտակել , ա ինչն դժուար
կացութեան հանդէպ է որ կը դըր-
նուի :

Ճշմարտութիւնը բարձրագոյն
յայտարարելու և անհաճոյ կողմե-
րը սնի , և աշխարհի ստեղծուածէն
ի վեր , հակառակ մարդկութեան
սպառած յրանմթոր ջանքերուն ,
գրեթէ մութի մէջ մնացած է այն
անգամանակի . . . Ահա՛ թէ ինչո՛ւ
չիտակ խօսուցին քեզիմ ծակ կըլ-
լայ՝ ըսած են : Վկայ Պ . Երուսաղ-
թօլեանը և ուրիշներ . . .

Երբեք տիրող օրէնքներն իսկ խաչ-
խափու մով վերադարձուած են դէպ
այն , և այսպէսով դժուարացած է
հրապարակախօսին դիրքը . այնպէս
որ՝ զանազան խնամեալ գարձուած-
ներու և սեթեթեթեթեթ լեցուն բա-
ցատրութիւններու գիծելու կըս-
տիպուի իր զգայածները արտա-
յայտելու համար : Այսպէսով հնա-
բաժիտ և կեղծաւոր կորուցը (գործիչ)
հիշտիւ կրցած է ինքզինքը միա-
միտներու առջև արգարացնել ի նը-
պաստ իրեն խաբէտքի ինքն յե-
րիւրելով . . .

Հանրային գործունէութեան աս-
պարէզը մարքելու համար այդ կար-
գի Մարիաւելներէ , շեղու՛մ մը
պէտք է ընել վերոյիշեալ ընդհան-
րացեալ կամ ընդհանրանալու վրայ
եղող այսպանի սովորութիւնէն . . .

Հրապարակագիրը պէտք է որ
յստակ , կտրուկ , անկաշկանդ և
առանց նկատումներու խօսի , եթէ
իր անկեղծութեան վրայ վստահու-
թիւն ունի . այն ստան՝ եթէ ո՛չ
ամբողջովին , գոնէ մեծագոյն մա-
սամբ կրնայ ճշմարտութեան մօտե-
նալ . . .

Այս վերջին միջոցը իմ ալ ու-
ղեգիծս կընտրեմ՝ յօգուտ պատկա-
նած համայնքիս , որուն ամենէն հա-
մեսա մշակներէն ըլլալու պատիւը
վայելած եմ , քառորդ գարէ տ-
ւելի ժամանակ մը անընդհատ :

Պռոտոթոսու և շարժարան ազ-
գային մշակ մը՝ եթէ իմ տեղս ըլ-
լար՝ հիմայ եթէ ո՛չ պղծէ , գո-
նէ երկարէ յորեկան մը առնուազն
տօնելու ձանձրոյթը առնելու էինք . . .

Իմ խորագրիս առիթ տուող
մեծ հաստատութիւնը . Հայկական
Բարեգործական Ընդհանուր Միութե-
անն է , որուն հաստատման առ-
թիւ իմ զգացած գոհունակութիւնս
չիմ՝ զլացած յայտնելու « Արշաղոյ-
սի » վերջին երկամեայ չըլաններուն
մէկ քանի թիւերովը , արդի Օսմ .

հայ երեսփոխաններէն Տօլթէօր Ն .
Տաղաւարեանի տուած հաւաստիք-
ներուն կրթնելով . . .

Արդարեւ՝ Տր . Տաղաւարեան իր
յարաբերութեանց մէջ բաւական
կեղծիք կը խառնէր . բայց ատոնց
դէմ ներողամտութեամբ չի վերա-
բերուելու համար՝ մարդ Պ . Ազապ .
լարին չափ խոտապահանջ ըլլալու է :

Տեսակէտներու տարբերութիւնն .
Յաջորդ թիւին կը՛ պաշտա-
ւորուինք թողուլ մեծ հաստատու-
թեան վերաբերեալ մասերը . . .
Եղիօ՛՛ Թորոսեան
(Մնացեալը յաջորդով)

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Աստու-Ապագային « Արշաղոյսի »
բարեկամ մը՝ զրկած է մեզի թարգ-
մանութիւնը Եթովպիոյ վեհ . Մե-
նելիք Բ . Կայսեր յայտարարու-
թեան , որ նոյնութեամբ հրատարա-
կութեան կուտանք ապագայ պատ-
մութեան համար :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԻՆ ՎԵՂԱՓՈ-
ՌՈՒԹԵԱՆ ՄԵՆԵԼԻՔ ԵՐԿՈՒՇԱԿԱՆ ԿԱՅ-
ՍԵՐ ԵՐԿՈՎՊՈՒՑ

Յաղթական առիւծս յ'ազգէն Յու-
զայի Մէնէլիք Բ . քնարեալ յկատու-
ծոյ . Արքայ Արքայից Եթովպիոյ :

Ո՛վ արք երկրին մերոյ Եթովպա-
կան աշխարհի , ով օրհեակք , եղբարք
և սիրելիք մեր , Դուք ամենքեանք
մինչև ցայսօր , առանց երբէք զմեզ
վշտացնելու , մենք իշխեցինք մեր
երկրին վրայ . ողորմութեամբն Աս-
տուծոյ :

Նաև զուք զմեզ ճշմարտապէս օր-
րիցուք . եւ ամենքեանք ևս միասին
համաձայնութեամբ կենցաղավարելու
պատճառաւ մինչև ցարդ մեր բնիկ
հայրենիքն Եթովպիան . ոչ մի թրջ-
նամուտ կողմանէ համարձակարար չ'ա-
նարգուեցաւ . իսկ այժմ ինչպէս որ
ստիկ տաղ ծանուցինք ձեզի , եթէ
մեզի պատահի Աստուածային վերջա-
կան կամքն . կը յայտարարեմ ներկա-
յիս կրկին անգամ թէ՛ Պահածատն-
գրն մեր է Լըժ Իեատուն , զուակ զըս-
տերն մերոյ Վոյզէրո Շօվարակիայի և
որդի Ռաս Միքայէլի : Նա է որ մեր
Գահը պիտի պահպանէ և յաւերժաց-
նէ . եւ որուն խնամակալ նշանակե-
ցինք Ռոս Պիթօզաս Թասամման : Լըժ
Իեատուն զատ արու զուակ չունինք .
բայց եւ այնպէս այս կարգադրութիւ-
նըն ընելուս պատճառն այն է որ
ըստ մեր նախկին սովորութեան զորո
չըլողայինք թողնելով ի պաշտ մը-
նալիս սեանելով չ'արձուարէք երբէք :
Ապա թէ ոչ այն անձր որ մեր կե՛ծ
գանութեան օրերուն մէջ մեր Գահա-
ժատանգ զուակն իր հետն առնելով
ասցին անցին առնելով զեղութիւնը .

նեյ կամի, այնպիսին անիծեալ եղի-
ցի. այսպիսի մարդն ալ զանէ՛ծն Յու-
դայի եւ զանաթեմիան Արիտի ընկալ-
ցի և Այն անձն որ մեր խօսքն եղծանէ
զայնպիսին հոգն անպամ մերժէ, եւ
երկիրն իր սրտի խորութեանց մէջ
թող իր մարմինն չընդունի, այնպիսի
մարդը թող սեւ շաքի ծնող լինի: Ո՛վ
զուք ամենեքեանքդ, զորս մեծացու-
ցինք եւ զորս պատուոյ փառաց եւ իշ-
խանութեան հասուցինք, ո՛վ զուք իշ-
խանքդ, զօրավարքդ, կամ զօրական-
քդ, ո՛վ մեծամեծք եւ փոքունք այս
յայտնի ըլլայ ձեզի որ ամէն անոնք որ
մեր կամքէն ելնեն, արդէն անիծեալք
են, նոյնպէս մեզմէ կաքը, մեր զա-
ւակին չի հետեւող կ'անիծեմք: Նմա-
նապէս մեր որդին Իեսուսն եթէ՛ ձեզի
չի յարմարի, ձեզի որ իր հայրերն եւ
եղբայրներն էք, եթէ կըսեմք ձեր կամ-
քին հակառակելով անվայել կերպով
գէջ գործերու հակելով շարք գործելու
ըլլայ, թէ՛ դիմքն եւ թէ՛ իւր խնամա-
կալը Ռաս Պիթոգատ անիծելով կ'ա-
նիծեմք:

Գրեցաւ գիրս ի 20րդ աւուր ամ-
սոյն Թըրքմէն 1902 թուականի Փրկ-
չին (ըստ Եթովպացոց) ի Մայրաքա-
ղաքիս Ասիս-Ապպայայի (2 Նոյ. 1909)

Ք Ն Ն Ա Գ Ա Տ Ա Կ Ա Ն
ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԵՆ
(ՎԱՐՃԱՊԵՏՐ)

Անկողմնակալութիւնը պարտք
կը դնէ մեր վրայ - թէ՛ կը քիչ մը
ծանր պարտքերէն ըլլայ այն - հը-
րատարակել Եղիպտոսեան ամենա-
ծանօթ եւ քաջամուտ երիտասարդ-
նկարիչ Տիար Երուանդ Տէմիրճեա-
նի - որ վրձինն հետ լաւ գրիչ ալ
չարժեղ գիտէ - քննադատական գը-
րութիւնը, «Տառապանքի Աշխար-
հէն» նոր հրատարակելու վէպի
մասին, որ ամենափոքր ընդունե-
լութիւն գտաւ Գահրէի մէջ:

Պիտի թելագրէնք երիտա-
սարդ յարգելի հեղինակը՝ Տ. Վար-
դան Բրուտեանը, որ փոխանակ
վերադարձնալ զգալու եղած քննա-
դատութենէն, գոհ մնար լուրջ եւ
ձեռնհաս երիտասարդին ազնիւ դի-
տումներով կատարած սոյն աշխա-
տութենէն եւ նոյն իսկ իր միւս վէ-
պերու պատրաստութեան առթիւ
չմնար օգտուիլ եղած նկատողու-
թիւններէն:

Մենք այժմէն իսկ կը խոստա-
նանք եղած քննադատութեան դէմ
հեղինակին լուսաբանութիւնները ամ-
բողովին հրատարակել, վստահ ըլ-
լալով թէ՛ ինք գիտէ է ըմբռնել
քննադատութեանց կարեւորութիւնը
եւ անոնց պատասխանելու համար օ-
րինաւոր համարուած գրական սճը:
Քննադատութենէ խրտիլ, յա-
ռաղիւծութիւնը ատել կընչանակէ:
ԽՄԻ.

Ոչ - ինքնուրոյն վէպ մը, այդ
«Տառապանքի Աշխարհէն»ը, իրական
ատաղձով մը ու բաւական կոկիկ դա-
սաւորութեամբ, ուր պաշարի նուազու-
թիւն, վերիփորոյթիւն մը եւ ուրիշ
վէպերէ անուղղակի վերյուշում մը կը
տեսնուի:

Ահաւասիկ վէպին գլխաւոր գի-
ծերը:
«Հայաստանցի երկու երիտա-
սարդ, զրացի ընկերներ, Աւէ եւ
Թեօք, կ'որոշեն Ամերիկա գաղթելու
սակայն ճամբան, զիպուստով մը քէ-
տայիներու հանգրիւկով, անոնց կը

միանան, Սուրբ գործով վառուած:
«Տառապանքի տարի յետոյ, Աւէ,
պաշարուած մը պրծած, կը յաջողի
գիւղ վերադառնալ ու կ'իջեւանի խրճի-
թը զրացի պատուին, որ Գէորգին
մայրն է, ուր քաջագործութենէ մը
յետոյ, վարժապետ կ'ընտրուի ուրիշ
գիւղի մը. հոն խելացիի համբաւով մը
մէկ երկու տարի մնալէ վերջ, հարիւ-
րաւոր հայ կալանաւորներու գլուխ
կազմած, կ'երթայ լեցնել քաղաքին
բանտերը: Այդ միջոցներուն է, ահա՛,
որ Գէորգ, մուրացիկի կերպարանին
տակ, կ'երթայ զանել իր մայրը, կ'ըն-
դիւրեւ կը զուակը, որոնց մօտ կը սեղեկա-
նայ իր ընկերք մասին, որ բանտարկ-
ուած կը մնար: Անմիջապէս կը մեկնի
եւ կը յաջողի կարեւոր անդեկութիւն-
ներ քաղել. մեծ համակրանք դտած
հին բանտարկեալի մը մօրմէն, եւ
մուծ գիշերով, ծակելով բանտը, վար-
ժապետն ու ամբողջ բանտարկեալները
կ'ազատէ: Վարժապետի ընկերները պատուա-
կան վրէժ մը կը լուծեն պետական պաշ-
տօնեային, ազգութաց մատնիչներէ եւ
անեւանդիչ քերտուրէ. հուսկ ուրիմ,
վերէն եկած հրամաններով, արեւն հո-
սող հայ վիճակներու մէջ, մեր հե-
րոսն ալ վայրագ խուժանի մը դէմ
մարտնչելով շունչը կը փչէ:»

Հեղինակը տրամաբանութենէ կը
հեռանայ շատ մը կէտերու մէջ. ման-
րամասնութիւններ, որք երկրորդական
կարեւորութիւն ունին արգարեւ. ա-
կայն յոյժ կը մեղանչէ իր կոչումին
դէմ, երբ յաւակնոտ խանդով մը, իր
հերոսին (վարժապետին) բերնին մէջ կը
դնէ, յախտն, անհետատես ճառ մը.
(որուն լաւ կողմերը չեմ ուրանար). ուր
ծրոսած, դաւաճան, ստիպեալ սաճարիկ
խնկարկու կ'անուանէ գիւղին քահանայն,
կրօնքին եւ կրօնաւարներու համար ու-
նեցած դարեւոր, սա՛ պէս ըսեմ, բնա-
ծին յարգանքով սնտ) հայ ժողովուր-
դին ներկայութեան, յետոյ, ինչ ան-
խօսեմութիւն կը գործէ վարժապետը,
ստատելով ամեն վատութեան կարող
գարչիւններ ու այդպէսով մղել զանոնք
իրենց գաղբիլի գործին ինչ անխօսե-
մութիւն, կըսեմ, այդպիսիներու առջեւ
զրգուի ժողովուրդը. բնական սարքել
եւայն, ահա՛ ստոնք օրինակելի անձ
մը չեն ներկայացնել ինձ վարժապետը.
հետեւեալ ան անարժան գրքի մը հե-
րոսը պատկերացնելու, ու ես (խօսքը
մէջընդմիջ) այդ մարդուն մէջ (որ ար-
գարեւ քաջ մ'է), սա՛ վերջերս վանայ
մէջ պատգամներ յոխորտացող անխո-
հիմներու խմորէն կը դանտ:

Գիրք մը նպատակի մը համար կը
գրուի, ուր հեղինակը տրպար մը վեր
կը հանէ, վեհօգի կամ ցածոգի. անոր
վրայ կեղծանցներով ամբողջ լոյսը,
ուրիշ կը ցուանան երկրորդ կամ եր-
րորդական գերակատարներ, բան մը որ
չ'անտեսուի մեր «Տառապանքի Աշխար-
հէն» ին մէջ. սակայն ու՛ր է նպատա-
կը:

Հիմայ, մանկնք մանրամասնու-
թեանց մէջ որք թերի են:

Աւէն ինչպէս կը գտնէ, տասներ-
կու տարուայ տնօրինակ դէպքերէ յե-
տոյ, ատանկ ասարտագրեցիկ եւ անար-
կու խաւար» գիշերուայ մը մէջ իր ըն-
կերք տունը եւ ինչպէս կը անդեկանայ
իր ծնողքին մահուանը, միջոցեւ յետոյ
նոյն տան բուն տէրը, Գէորգ, երկու
տարուայ պղտիկ տարբերութեամբ մը,
չճանչնար իր սուռը, ու աւելին, իր
մայրը, կ'ընդ, եւ ոչ ալ անոնք զինքը:
Ու՛ր միաց բնազդը, արիւնի ձայնը:

Յետոյ, պատար (Մարէն) սօզնա-
կին ծակէն ինչպէս կը տեսնէ զուրքը,
նոյն ասհարկու խաւար» գիշերուան
մէջ, երբ մանուսանդ, ճրօգ մ'ալ կը
վատի իր մօտ, ու նորէն, ինչ անքա-
ղաքավար այդ վարժապետը՝ որ իր ճեր-
մակեղէնները կը փոխէ օտար տան մը
մէջ, ուր ներկայ են մտտող կ'ին մը եւ
տղայ մը, կտմ թէ, այդ կէնձ հարսը
ինչպէս պտկած (արթուն ըլլալով հան-
դերձ) կը մնայ, օտար երիտասարդի մը
ներկայութեան:

Երբ Անտոն, այդ հրէջը, իր ար-
բանակներով կը խուժէ խրճիթը,
տղան կը զատանցէ, ու՛ կընէ յար-

գիլի հեղինակը, «ամենք լուս ու-
մունջ մտիկ կընեն» քիչ մ'եւս. եւ
«երկի դաժութեամբ» պիտի աւելցնէր:
Ձառանցանքի պէս օրիշներու առաջ
զպացումը միայն կը կասի, ուրիշ գիւղ
պարս էին ըլլալ այդ գարչիւնները,
մանուսանդ որ անոնք անզուսպ նպա-
տակ մը ունէին յագեցնելիք եւ որոց
համար ժամանակն ալ սուղ պէտք էր
ըլլալ: Եւ յետոյ, նարնջագոյն եագմայ
մը կը դնեն հարսին բերանը, ինչն ու
նարնջագոյն, ինչ պէտք ատանկ ան-
հարկի մանրամասնութեանց. որք գոր-
ծողութեան մը արագութեան ապառ-
տութիւնը կը խաթարեն, հետեւեալք եւ
կ'սպաննեն գործը:

Շարունակներ գրքին շարիւղը:
Տառիկ միւթէսարքի մը կամ միւ-
տի մը, որքա՛ն լրջօրէն ստակացե-
ր են հայերէ, Աստուած իմ, երբ ասոնք
կըսեն (երես 61) «մէկ ժամէն միւսը
ամբողջ իսլամ հաւատաւորները փճա-
նալու սպառնալիքին տակ են: Կամաց
եկուր, հեղինակ, ուրախութեան պի-
տի խնթիւնսմ հիմայ:

Այս կերպ արտայայտութիւններ,
ենթացիկ կուտան ինձ թէ՛ սխալ ըմ-
բռնում կամ քիչ ուսումնասիրուած
է թուրք մեր մէջ. ահա՛ ինչ որ պատ-
ճառ գարձաւ մեր կորուստին մեծ մասին:

Շարունակներ, Աստուած ման-
րամասնութիւններ որք պիտի շահէին
լուսնայն եւ որք կը կորսնցնեն ըս-
ուելով. զօր օրինակ, (երես 87) եր-
կու տող զանց անուշեղով աւելի effet
կարելի էր ձեռք բերել: Պ. հեղինա-
կը մէկ քանի տեղեր հայուն (ըլլայ ան
ամենագէշը), վերագրած է այնպիսի օ-
րարքներ, որ չէ ունեցած նա այդ սու-
րճան (երես 87), Հրաշալի մեքենայ
(երես 99) այդ գործիքը, որ քառօր
ժամուայ մէջ մէկ մարգաշափ տեղ կը
ծակէ եւ այն ալ բանտի մը պատը, ու
վարժապետ եւ ժողովուրդ (որոց կը
պատուիրուի իրար չ'ըմբռնել) ամէնքն
ալ զուրս կ'ըլլեն (օտար բանտարկեալ
ներ բնաւ չկա՞ր արդեօք մէջերին) և
հրա՛ջ. հակառակ մանրագիտիկ փնտրու-
տութիւնը եւ ոչ իսկ մէկը կը ձերբա-
կալուի վերջապէս այս տեսակ տրամա-
բանական պակասներ՝ որոնցմէ Պ. Հե-
ղինակը, քիչ մը ուշադրութիւն սպա-
նելով, կրնար գերծ մնալ:

Գրական հիմնութիւն մը չ'ունենա-
լուս համար, ոչինչ պիտի կրնամ ըսել
գրքին ոճին համար. բայց եթէ կար-
ծիքներ, զօր օրինակ, թէ երիտասարդ
գրչի մ'արդիւնք է այն, թէ անհճոյ
կրկնութիւններ կան հոն, ինչպէս զո՞վ
ցուեր, ծով... եւայլն» թէ, յաճախ,
պէտք է մէկ կամ աւելի երես կարդալ
հակառակու համար թէ՛ ո՛վ է խօսողը.
Թէ չ'փառանցուցութիւններ կան եւ այլն:
Միւս կողմէն հիմնապէս նկարագը-
րութիւններ օրինակ, հայ գիւղերու
պատկերացումը (երես 32) կամ սա հատ-
ուածը (երես 38) «Ամբողջին ուշադ-
րութիւնը վարժապետին վրոյ կեղ-
բոնացած էր, մինչ ան՝ աչքերը ձէթի
չթրտացող լոյսին յառած կը մտածէր»
վերջապէս այլ սիրտն ձեռքի ներք, որք
հեղինակին զգայնութիւնը կ'ապացու-
ցանեն. հեղինակ՝ որուն մտտող երի-
տասարդութիւնը մեծամեծ յոյսեր, ինչ
կըսեմ, ապահովութիւններ կը ներշնչ-
չին մեզ:

Ե. ՏԵՄԻՐՃԵԱՆ

ՆՕՐԵՐ
ՆԻՆՈՒՆԷՆ

ԱՊՐԱՆՈՒԹԻՆՆԵՐԸ
Կիլիկիան աղէտին պատճառաւ
ապահովագրական ընկերութեանց
եւ ապահովագրականութեան մէջ ան-
համաձայնութիւն գոյանալով հարկ
եղած է զատի դիմել:

Արդ՝ Օսմ. երեսփ. անդամ եւ
միւնեսթր ատեն ծանօթ փաստաբան
Գրիգոր Էֆ. Չօհրայ նամակ մը
հրատարակելով կըսէ թէ՛ իւնիօնի
պաշտպանութիւնը ստանձնած չըլ-

լալը անոր - Իւնիօնի - անիրաւու-
թեանը համոզուած ըլլալը չէ, հա-
պա իր սրտին եւ զգացմանց չի հա-
մաձայնելուն համար. ու կաւել-
ցնէ:

«Որովհետեւ արդարաւորու-
թեանը համոզուած եմ, թոյլ տը-
ուէք ինձի աւելցնել որ՝ ապահո-
վագրական ընկերութեանց ընդ-
գիմութիւնն բոլորովին անհիմն ա-
ռարկութեան մը վրայ չի յենուր,
ո՛չ:»

«Սա՛ չափը միայն ըսեմ որ,
հայերը միմիայն իրենց փաստերը
գիտնալով պէտք չէ բաւականանան.
գիմացի կողմն ալ խիստ կարեւոր
առարկութիւններ ունի, զորս ար-
ժեքէ զուրկ ենթագրքելը՝ անխոհեմ
ինքնազոհութեան մը վրայ կրնայ
կոչուիլ եւն:»

ՈՃԻՐԻ ԽՈՍՏՈՒՄԻՆԻՆԻՆ
Վանի երեսփոխան Վ. Փաւ-
ժաղեան Աղթամարի կոչուածին
պաշտպանողականը ընելու համար
«Ազատամարտի» 127 թուով հրատա-
րակած յոդուածին մէջ ոճիւրի խոս-
վանութիւն մը կընէ ըսելով թէ՛
«Արեւն Վրդ. թէրթորէն վերջ,
(քննութեամբ հաստատուած է ա-
նոր մատնիչ ըլլալը) կաթողիկոսա-
կան տեղապահ կը կարգուի եւն:»

Բայց պէտք չունի եղեր մտա-
ծելու թէ՛ այդ խոստովանութիւնը
գատապարտութեան կիւք մը կը
գնէ իրենց ճակտին վրայ, միւնեսթր
ատեն Չիլիսեֆ և իրենց հետ բոլոր
հայերը կատարածին ընծայելով տի-
րող կառավարութեան աչքին, ու
այս բանը եթէ իրենց չ'փաստէ ի-
րենց ժամանակաւոր - ո՛վ գիտէ -
գիրքին համար, կրնայ փաստել ա-
մեն ատեն զառաւացի ցանուցիք
եւ անպաշտպան ժողովուրդին:

Ո՛ր է է կանոնաւոր կառավա-
րութիւն որ իր գատարանները դա-
տաւորները ունի, առանց իր կող-
մէ տրուած օրինաւոր վճուի, մար-
դապանութիւնը ներքի չի համա-
րիւր, եթէ այդ ոճիւրը գործուի
նոյն իսկ մատնիչ համարուած մէ-
կու մը վրայ: Կառավարութեան
մէջ կառավարութիւն կ'ըլլայ այս:

Արեւն վարդ. ք կրնայ մատ-
նիչ մը եղած ըլլալ, զայն սպան-
նողներուն տեսակէտովը, սակայն
միւնեսթր ատեն ինչօ՞վ կրնանք հաս-
տատել թէ՛ եղած այդ քննու-
թիւնները եւ հաւատարմութիւնը նը-
պատակաւոր եղած չեն կրնար ըլ-
լալ, լոկ սարսփեցնելու եւ ահա-
բեկելու համար անտէրունջ ժողո-
վուրդը, որ արդէն առանց ատոր
ալ ահաբեկ վիճակի մէջ կը գըտ-
նուէր...:

ՕՐԷՆՔ ՄԸ

Կոլոսոյ թերթերը գրեցին թէ՛
Պոլսոյ ներքին գործոց նախարարու-
թիւնը առանձին չլրաբերականով
արգելած է կրօնական հաստատու-
թիւններու մէջ քաղաքական կու-
սակցութիւններու կոչմէ միթիւնկ-
ներու գումարումը:

Ազատամարտ ստոյգ ազդեւրէ
կը լսէ թէ՛ արդարեւ հրահանգ մը
կայ տրուած, բայց սա՛ իմաստով
որ արգելուի քաղաքական կու-
սակցութիւններուն, ազօթատեղի-
ներու կից գրասենեակներ հաստա-
տել իրենց աշխատութիւններուն
համար:»

«Ազատամարտ՝ իր հերքելա-
կերպովը յօնք յինելու տեղ աչք կը
հանէ, ինչպէս կըսեն:

Հոս Եգիպտոսի մէջ ալ խստիւ գործադրութեան գրուած օրէնք մը կայ, որ մէյխանէները և... ները ազօթատեղիներէն առ նուազն 50 մէթր հեռի ըլլալու են: Ըսել է սարկոս նման օրէնք մը՝ քաղաքական կուսակցութիւններուն համար: Արդեօք այս խնդիրը Եգիպտոսի օրէնսդիր ժողովին մէջ եթէ յուզուելու ըլլայ, քաղաքական կուսակցութիւններուն «գրասենեակներուն» համար քանի մէթր հեռաւորութիւն պիտի նշանակուի... կառուր է գիտնալ:

Հաւաքեց
ԱՐՇԱԼՈՅ

ՊԷՏԲԸ ԿԱՅ

Երկու հաս ուսանող գրաշարներու: Պայմաններուն ծանօթանալու համար, փափաքողները կրնան դիմել Արշալոյսի Տպարանը Շարա Ապտէլ Ազիզ, Շէրիֆ բաշայի պարտէզին գիմաց:

ՏԵՂԱԿԱՆ

Ն. Բ. ԽՏԻՎԸ

Նորին Բարձրութիւն խորհրդը Հինգշաբթի օրը նախկին գործերու (Մահմէդ) հանգէտներուն նախագահեց, իր շուրջը ունենալով բոլոր նախարարները: Կառավարական բոլոր պաշտօնատուները զոյգ էին:

Նախկին գործերը բերդէն փոխադրուեցան Ապպախիէ, և շաբեկաւ գործելով Սուէզ զրկուեցան, որովհետեւ նախով ձիտատ պիտի փոխադրուին:

Մահմուտա զբօսանալը Սուէզ կ'սպասէր նոյն օրը, նոյնին Բարձրութիւնը իր հետևորդներով Հիւճազ փոխադրելու համար:

ՆՈՐ ՄՈՎՍԻՍԻԱՆ

Մուսրիի ոստիկանութիւնը քանի մը օր առաջ նորածին մը գտած է կողովի մը մէջ խնամով պահպանուած, որուն քով թուղթ մ'ալ կայ եղբոր նորածինին մկրտուած և անուան Սօֆի եղած ըլլալը հաստատող:

Ոստիկանական քննութիւններէ հաստատուած է որ հնգետասան ամեայ յոյն սպասուհիի մը մեղապարտ յարաբերութեանց արդիւնքն է եղեր և այդ պիտի լինէր պատճառ եղած է որ ուրիշ շատ մը մրտաքիւններ ալ երևան գան...:

Այս, Աստուած իմ, պիտի ըսէր ՍՕՆ. սա պղտիկներուն ձայնը երբեմն ո՞րչափ բարձր կելլէ Լզեր որուն չորրորդ զօրաբանակի փոսա հարներն անգամ կրնան նախանձիլ:

ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄ

Ճամբուած սպասուհի մը՝ առ...

ժամանակեայ կերպով իր նախկին տիրուհուն տունը մտնել յաջողիլէ յետոյ, կը թունաւորէ տանին երկու մնայուն սպասուհիները, որպէսզի իր տիրուհին ստիպուի զինքը պահել:

Մեր յեղափոխականներէն աւելի յեղափոխական այս սպասուհին...:

ԳՈՂՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ խորունկ փորուած է աչքդ հարցուցեր են մէկուն, որ դժբաղդութիւնը ունեցած է աչքը կորսնցնելու:

— Բարեկամս փորեց՝ անոր համար, պատասխանած է:

Այսպէս ալ մեր Մշեցի Պ. Մե...

լիք Խաչատուրեանին պատահած է:

Անցեալ օր իր ամենէն մօտ բարեկամներէն մէկուն օժանդակութեամբ երկու հոգի սենեակին դուռը կը կտորեն, Մեղիքին այնչափ տաժանքներով խնայած քանի մը ոսկին գողնալու համար: Հայ և գաղութիւն որչափ հեռի բաներ էին երբեմն, և հիմայ որչափ մօտ կ'սպրին իրարու...:

Բարեբաղդաբար դրացիները կարծինան և կը ձերբակալեն հայ անզոգական աւազակը որ Մեղիքին հացը ստեղծէ յետոյ անոր համեստ խնայողութիւնն ալ ունեց կուզէ եղբոր, եթէ երբէք Մեղիքը իր խնայողութիւնները իր անշուք սենեակին մէջ պահելու չափ անխոհեմ կրնայ դառնալ...:

ՅՈՒՍԱՀԱՏ ՄԸ

Քսան տարեկան մանկամարդուհի մը սիրային յարաբերութիւններ կը մշակէ թրամվէյի պաշտօնեայի մը հետ՝ և իր չափազանց ըզզալուն բնաւորութիւնը կը թոյլատրէ զինք սիրային առանձն մը ընել և ատոր հետեանօք յղի մնալ:

Մեղապարտուհին ինքզինքը լքեալ տեսնելէն յոստահատ՝ ասիտ ֆինիքով անձնասպանութեան կը գիմէ և հակառակ տրուած բժշկական խնամքներուն, տակաւին վրտանկէ զերծ չէ:

ՆԱՄԱԿԱՆԻ

Երուսաղէմ. Բաթ. Ե... «Ուխտաւոր»ը գտաւ զիս և տեսնուեցանք: Շատոնց կը ճանչնայի զինքը: Բարի անձ մըն է:

Տուր անդեկութիւններ ձեր հարցումներուն նկատմամբ, որ անշուշտ պիտի հաղորդէ ձեզի նամակաւ:

Ձեր ակնարկած ձեռագրի մասին ինք ալ պիտու ըրած է պաշտօնական սեղեր և նոյն իսկ Առաջնորդարան, բայց իրեն տրուած անդեկութիւնները խեղաթիւրուած և ՍՈՒՏ են: Ես գոյքերս և գիրքերս ինչպէս նաև թղթերս՝ հակառակ իմ բոլոր դիմումներուն տակաւին յաջողած չեմ առնել Առաջնորդարանէն, որուն պատասխանատուութեան ներքեւ կը գտնուի և զանոնք այլ և այլ միջոցներով ոչնչու...

ԵՂԻՅԷ ՓՆՍՊՈՒՔՅԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՏ ԷՆ ԱԶԻԶ ԳԱՐԱԳՕՒՆ ԴԻՄՍՏ

Միակ ներկայացուցչն է Ազգ. Հիւանդանոցի սիկարի թուղթերուն. կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ: 1910 տարուայ պատի և զրպանի օրացոյցները կ'ընելու համար միայն մեր վաճառատունը դիմելու է, և կամ դիւրութեան համար Արշալոյսի Տպարանը:

ցնէլ կուզէ. ծածկելու համար ոճիւրը և գողութիւնը. որուն դիտակ էր իր ժամանակին:

Տնչույս ազգային վարչութեան անդամներուն մէջ բարի տրամադրութիւններով օժտուած անձեր կան, թուով քիչ թէև՝ բայց ասոնք ալ ինչ ինչ նկատուեցան առջեւ արդարութեան կը հեռանան, որ ամենէն սոսկալին է...:

Ան իրողութիւնը համառօտելու իմ իրաւունքներս դատարանի միջոցաւ պաշտպանել պէտք կ'ըլլայ, հակառակ իմ բոլոր տրամադրութիւններուն՝ որ ազգային շրջանակի մէջ լուծուած ստանար այս ուսուող զրկանքի ինչոքը:

Մի-ՀԱՅ. — Վերի պատասխանէն քաղցեք պէտք եղածը: Ձեր ուզած գրքերը Հիւսիսի կարենամ զրկել որովհետև իմ ձեռքիս տակ չեն գրանցուիր:

— Մաշտոց. — Ձեր ուզած գրքերն ալ Հիւսիսի կրնամ զրկել, վերագրեալ պատճառներով: Եթէ ստանամ կը փութացնեմ:

— Հրայր. — Ստացանք նամակը և բողոքագրին ընդօրինակութիւնը: Մենք աւելի դրական և աչքի առջեւ եղած շատ մը ապացոյցներով ալ հոս տատած ենք ձեր ակնարկած վարդապետի պարտազանցութիւնը, անուղղամտութիւնն ու անհամար զեղծումները: Անշուշտ օր պիտի գայ որ իր արժանի պատիժը գտնէ իրմէ բարձր տեսչերէ...: Այդ պայմաններուն և ընթացքին մէջ ո՞վ կրնայ յաջողութիւն գտնել արդէն: Միայն թէ՛ որչափ որ յապագի իր փափաքելի անկուճը, շատեր ինչեւս տուժեն անոր անարգարութիւններէն և գործած անխիղճ ապօրինութիւններէն: Ան այժմ այս է պատասխանս Ձեր նամակներուն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՆՔԵՐ

Երուսաղէմէն սկսած է մեծ քանակութեամբ մանքար արտադրուիլ, Տեղապահին ընտրութենէն ի վեր:

Հեռալիբ հեռալիբ վրայ կը տեղան կոր եղեր հիմայ, բայց ասոնցմէ շատերը մանքարական կերևան: Մեղք եղած ծախքերուն...:

Այնպէս կերևայ թէ այդ խառնաչփութիւնները աւելի լայն ծաւալի մէջ պիտի շարունակուին և ատոր պատճառը եղած պիտի ըլլայ Ազգ. վարչութեան քինախնդրի և միակողմանի որոշումը: Յայտնի բան է որ մէկ քանի-

ներու կողմէ չուզուի որ Երուսաղէմի մէջ խաղաղութիւն տիրէ:

Մեծ ամօթ մը պիտի ըլլայ ազգին համար Երուսաղէմի խնդիրը ՏՈՒՐԿԵՐԸ...:

Արաբիներէն կը հեռագրեն Ազգ. Պատրիարքարան թէ՛ մեծ խստութեամբ զինուորական տրոց հաւաքում սկսած են մինչև 1324 թրականին համար:

ՎԱՐՉԱՊԵՏԸ

Կեդր. վարչութեան անգամայն վարչապետ Հիւսիսի Բաշայի մօտ ըրած դիմումները ապարդիւն ըլլալու համար ընտրելով հաւաքական հրատարական մը ստորագրելու որոշում տուած են:

վարչութեան Ատենապետը Ազարեան էֆ. արդէն հրատարական զրկած է միեւնոյն պատճառաւ:

Ե. ԹՓՃԵԱՆ

Եղիշէ Թօփճեանի սպաննիչը ենթադրուած Յարէթ անուն հայը, հեռագրաւ Պատրիարքարան դիմած և իր վրայ եղած ամբաստանութիւնը հերքելէ յետոյ, Ասզ մուհաբեմէն ձեռք բերելու դիւրութիւններ ընծայուելը կը խնդրէ Պատրիարքարանէն:

ՀԱՆՏԻՍԱ ԱՄՍՕՐԵԱՅ

Իր ող. ՏՈՒՐ 1910


Բացուած է բաժանորդագրութիւնը

Բաժնեգինն է կանխիկ
Surticulis 15 մր = 6 Բուրչի
Խոսքանիսր քիսր 1,50 Ըր. 70 կ.
Դիւնը՝ Rédaction de la Revue
HANDES AMSORYA
(Autriche) VIENNE

ԱՐՄԵՆԻԱ

Ստացանք «Արմէնիա» 25րդ տարեշրջանի Ա. Բ. Գ. թիւերը: Յաջողութիւններ կը մաղթենք մեր յարգելի պաշտօնակցին, որ այնչափ երկար տարիներ աշխատած է ազգին համար:
Բաժանորդագրուելու համար գիմել՝
Mr. M. Portoukalian
Directeur du Journal «ARMENIA»
(France) Marseille

Հայկական վիճակահանութեան ազգարարութիւնը և շահող թիւերը տեսնել չորրորդ երեսին մէջ:



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇԱՐԱ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ. ՏԱՐՊ - ԷՆ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1
ԿԵՄԷ ԷՆ ԿՈՒՂՐՍՍ ՄԶԿԻԹԻՆ ՃԻՇՏ ԴԻՄՍՏ

Երկար տարիներ կարևոր տուներու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր և թէ՛ դժբաժնուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ փափաքներու ապրանքները ընտրելով կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները: Իրմէ գնուած նոր մեքենաները հինգ տարի ձրի կը նորոգէ:
Նորոգութեանց համար երբ պէտք ըլլայ յաճախորդաց տուները կայցելէ և իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ: Կը վաճառէ նաև ամեն տեսակ կալի վառարաններ և ատոնց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ և դիւրազնի: Իրեն գիմող բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան:

